ՏԵԽՆՈԿՐԱՏԻԶՄ. ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Ա. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Երկրի անցած վերիվարումներով լի, հաճախ ողբերգական ուղին վերլուծելիս սոցիալ-քաղաքական, իրավագիտական ու բարոյական համակողմանի գնահատականներ են տրվում հասարակության զարգացման դիմախեղմանը նպաստած գրեթե բոլոր բացասական երևույթներին։ Սակայն կա մեր հասարակության հոգևոր-սոցիալական կերպարի վրա բացասական խոր հետք թողած, առավելապես նրա բնական զարգացմանը վնասող, վտանգավոր մի երևույթ, որի մասին բոլորովին չի խոսվել, կամ էլ շոշափվել է հպանցիկ։ Ավելին, չնայած հասցրած վիթխարի վնասին, այն կրողին քրեական պատասխանատվության չես կանչի։

Խոսքն անհատի պաշտամունքի տարիներին և լճացման պայմաններում լայնորեն տարածված ու քաղցկեղի նման մեր կյանքի բոլոր բջիջները թափանցած, այսօր էլ իներցիայի օրենքով խիստ կենսունակ, վտանգավոր սոցիալական հիվանդության՝ տեխնոկրատիզմի մասին է։ Ըստ որում՝ գուցե թե մեզանում գոյավորված քաղաքական-տնտեսական համակարգին իրավացիորեն տրված «տոտալիտար», «վարչաբյուրոկրատական» բնորոշումն ամբողջական չէր լինի, եթե դրան չավելացնեինք նաև տեխնոկրատական տերմինը։ Տեխնոկրատիզմն ամենևին էլ մարդկանց որոշ խմբերի, սոցիալական շերտերի անվնաս մտածելակերպ չէ. վարքագիծ, գործելակերպ դարձած՝ անառողջ այդ պրագմատիզմը դառնում է սերունդների հանդեպ հանցագործություն։ Հենց տեխնոկրատական մտածելակերպն էլ դարձավ մեր հասարակությանը ջղաձգող ու հիվանդագին վիճակի հասցնող, նաև կոմունիստական կուսակցության սոցիալական անճարակության, նրա քաղաքական կուլտուրայի, կադրերի ճգնաժամի, ընդհանրապես՝ հեղինակության անկման պատճառներից մեկը։

Բոլշևիկները դարձան իրենց իսկ երկնած ուղղագիծ ռացիոնալիզմի զոհը. յոթ տասնամյակ ի վեր նրանց թվացել էր թե հասարակությունը մեխանիզմ է, որը կարելի է համաձայն սխեմայի նախագծել-հորինել։ Ի դեպ՝ այս կարգի մտածելակերպը նաև վերակառուցման անհաջողության պատճառներից է։ Այսօր էլ դժվար է ապաքինել մեր հասարակության սոցիալական խոցերը ոչ այնքան այն բանի համար, որ դրանք խորն են ու բարձիթողի, որքան այն պատճառով, որ դրա համար անհրաժեշտ է սոցիալական իրատեսական մտածելակերպ, քաղաքական կուլտուրա, որը մեզանում հետին պլան է մղված տեխնոկրատականի կողմից, լցոնված է նրանով։

Մեր հասարակության հոմանիստական կերպարի վերականգնմանը, արտաքին քաղաքական նոր մտածելակերպի կենսահաստատմանն ուղղված ջանքերը նաև տեխնոկրատական մտածելակերպը թոթափելու գործողություններ են։ Ըստ որում, տեխնոկրատը վերացական կերպար չէ և ոչ էլ անպայման միայն ղեկավար աշխատող։ Նա, տարբեր «տրամաչափի» այդ չինովնիկը, նստած է արտադրական ձեռնարկությունում, կուսակցական-խորհրդային տարբեր մակարդակի մարմիններում, զանազան գերատեսչություններում, ուսումնական հաստատություններում, հիմնարկներում և այլն։ Տեխնոլոգիական դետերմինիզմի տարատեսակը հանդիսացող սոցիոլոգիական այդ բարդ կատեգորիան՝ տեխնոկրատիզմը, ոչ այնքան մասնագիտական հատկանիշ է, որքան՝ մտածելակերպ։ Այդ մտածելակերպով նույն հաջողու-

թյամբ կարող է առաջնորդվել թե՛ տեխնիկական կրթություն ունեցողը և թե՛ «ամենաուղղափառ» հասարակագետը։

Տեխնոկրատական մտածողության համաձայն, առաջընթացի երկու չափումների, հորիզոնական՝ տնտեսական-տեխնոլոգիականի և ուղղահայաց՝ հոգևոր-բարոյականի, «բանավեճը», որպես կանոն, պետք է վճռվի հօգուտ առաջինի։ Այս մոտեցմամբ էր ներթափանցված և՛ երկրի տնտեսությունը տասնամյակներ ի վեր պլանավորողների, և՛ գրոհայնության ժամանակի գրոհայինների, և՛ «մնացուկային սկզբունքը» նախատեսողների, և՛ բնության վրա բռնացման ստրատեգների, և հաշվարկ ճշգրտող տնաբույս ու այլամասշտաբ գիշանգղների, և՛ «ազգերի մերձեցման ու ձուլման» միջոցով «սոցիալիստական նոր ազգ» բուծողների գործունեությունը։ Այսքանը միայն երկրի ներքին կյանքում։ Երևույթն ունի նաև արտաքին դրսևորումներ։

Տեխնոկրատիզմն ունի իր նախապատմությունը։ Այն էական իմաստափոխման է ենթարկվել ու «հարստացվել» պրակտիկայով, ներգծվել վարչահրամայական-համակարգի կառուցվածքի մեջ, ձեռք բերել անզուսպ բյուրոկրատական հայտանշաններ։

Տեխնոկրատի համար բոլոր տեսակի նյութական ռեսուրսների առաջնության հենքի վրա մարդկային ռեսուրսը երկրորդային է։ Տասնամյակների ընթացքում մեր երկրում իրագործված բազմաթիվ պլաններ ու ձեռնարկումներ՝ սկսած կոլեկտիվացումից մինչև քիմիացումը, ոռոգումը, քառակուսի ու բնային եղանակները, եգիպտացորենացումն ու պարենային ծրագրերի շարանը ժողովուրդը չընդունեց, քանի որ դրանք նյութապես չապահովված և տնտեսագիտորեն հիմնաղուրկ լինելուց բացի, չէին համապատասխանում ժողովրդի հոգևոր վիճակին, հասարակության կուլտուրային։ Իրենք՝ տեխնոկրատիզմով ներծված քաղաքական հավատամքի ջատագովները, անտեսում էին մարդկանց, հասարակության անձնային շահերի որակը, հասարակության հոգևոր կառուցվածքը, սոցիալական փորձաքննության պարտադիր պրակտիկան։ Դրան զուգընթաց՝ հոմանիտար մտածելակերպը շագրենու կաշվի պես խմկվեց, մարդասիրական արժեքները գնալով զրկվեցին սոցիալ-պրակտիկ և կոնկրետ նորմատիվային նշանակությունից, կտրվեցին կառավարչական որոշումներից, կազմակերպական միջոցառումներից։ Այսուհանդերձ, տեխնոկրատական մտածելակերպն ու պրակտիկան չվերացրին մեր տեխնոլոգիական անլիարժեքության բարդույթը։ Մենք այնպես էլ իսկական, «քաղաքակիրթ տեխնոկրատիզմի», ինժեներա-տեխնիկական մտքի փայլատակումներ չունեցանք, և ոչ էլ տեխնիկատնտեսական մեր նվաճումներով պարծենալու հիմքեր ունենք։

Տեխնոկրատիզմը, որպես կանոն, ուղեկցվում է տնտեսագիտական անգրագիտությամբ, բազիսն ու վերնաշենքը փոխշաղկապված տեսնելու անկարությամբ։ Տեխնոկրատական մտածելակերպը քիչ բանով չնպաստեց մեզանում գիտնականի, տնտեսական աշխատողի, խորհրդային, կուսակցական գործչի՝ հաճոյացող, անսկզբունք, բարոյական թույլ իմպերատիվներ ունեցող, ապազգային նոր տիպի ձևավորմանը, որը ոչ այնքան սիրում է հասարակությունն ու հասարակական գործունեությունը, որքան իրեն այդ ամենի մեջ։ Այս հոգեբանությունը ծնեց փոխհարաբերությունների այնպիսի արատավոր համակարգ, երբ հատկապես բյուրոկրատական ապարատի, գիտական և այլ ոլորտների մարդկանց ավելի ձեռնտու էր դարձել ոչ թե գործ անելը, այլ պաշտոնակարգի աստիճաններով (հաճախ միջոցների առջև կանգ չառնելով) վեր մագլցելը, գիտական կոչումներ ձեռք բերելը։

Հոգեբանների կարծիքով տեխնոկրատի դիմորոշ գծերից է ճշմարտության միակ հավակնողի ինքնավստահությամբ այլոց մտքերի մերժումը, չըմբռնված-«չմարսված» իրավիճակների մասին անվերապահ դատողություններ անելը, այլ դիրքերից հանդես եկողների, այլախոհների նկատմամբ, անհանդուրժողականությունը, գործն անձնային կամ խմբային-թայֆայական, կորպորատիվ շահերով նենգափոխելը։ Տեխնոկրատական մտածելակերպին յուրահա-

տուկ է հոգևոր-կուլտուրական նիհիլիզմը։ Դա պատճառ դարձավ մտածողության կուլտուրայի նշաձողը ցած իջնելուն, վարքի, արտադրության, ինչպես ընդհանուր, այնպես էլ քաղաքական կուլտուրայի պակասին։ Կուլտուրայի նկատմամբ վերաբերմունքը դիտվեց որպես երկրորդական ոլորտի հանդեպ մտահոգություն։ Ձևավորվեց ու կայունացավ այն ստերեոտիպը, համաձայն որի գլխավորն արտադրությունն է և որ առանց կուլտուրայի էլ կարելի է ապրել։ Ինչ խոսք, ապրել կարելի է, սակայն ինչպե՞ս. եթե այնպես, ինչպես մենք արդեն սովորել ենք ապրել, ապա բանաձևիճելն ավելորդ է...

Տեխնոկրատիզմին դիմորոշ է նաև կոսմոպոլիտիզմը, ազգային մտածողության պակասը, մարդու մեջ ի հաշիվ չափազանց ռացիոնալի՝ հուզականի անտեսումը։ Մոռացվում է, որ ժողովրդի նվաճումները չափվում են ոչ միայն և ոչ այնքան գիտատեխնիկական բնագավառի նվաճումներով, որքան հումանիտար ձեռքբերումներով, արմատների խորությամբ և պատմական շերտանստվածքով։ Եվ առաջին հայացքից զուտ տեխնիկական թվացող շատ երևույթներ իրականում բարոյական ենթատեքստ ունեն։

Տասնամյակներ ի վեր մեզ ներշնչել են, որ երկրի, հանրապետության ապագան գերազանցապես որոշվում է նյութական արտադրության զարգացման աստիճանով։ Զտարյուն տեխնոկրատն արտադրության այսրոպեական շահը բարձր է դասում մարդու գոյության շահերից։ Նման գռեհիկ մատերիալիզմի, միակողմանի էկոնոմիզմի շնորհիվ էր, որ կրթությունն ու մշակույթը մղվեցին հետին պլան, մեջտեղ եկավ այդ ոլորտների «մնացուկային» պլանավորման և զավեշտականորեն միայն այստեղ գործող «խնայողական էկոնոմիկայի» սկզբունքը։ Մենք դարձանք անհոգի, մոռացանք մեր անցյալը։ Այս հոգեբանությամբ էր, որ տաճարները գոմերի վերածեցինք՝ սրբավայրեր հռչակելով մեր պատվախնդիր գոռոզամտության հուշարձանները՝ «կոմունիզմի մեծ կառույցները»։

Տեխնոկրատական մտածելակերպից զերծ չմնացին հասարակական գիտությունները։ Թերևս ժամանակին արդարացում ունեցող նպատակներով հասարակական հարաբերությունների ամբողջությունից ուշադրությունը հիմնականում սևեռելով արտադրական հարաբերությունների վրա, տեխնոկրատական պատկերացումների և գաղափարախոսական ուղղափառ դոգմատիզմի գերության մեջ հայտնված մեր գիտնական-հասարակագետների զգալի մասին գերազանցապես սկսեց հետաքրքրել ոչ թե ժողովրդական կյանքն ընդհանրապես, այլ արտադրությունը։ Դրա հետևանքով ասպարեզ եկավ, թերևս, ինքնին ճիշտ «սոցիալական պրակտիկան է ամեն ինչի չափանիշը» կարգախոսի գերաճած մտայնությունը։ Այս կարգի մտածելակերպի զորանալուն մեծապես նպաստեց այն, որ անցյալ տասնամյակներում քաղաքական ղեկավարության անշահագրգիռ վերաբերմունքի պատճառով մեր հասարակական գիտությունները վերածվեցին ընթացիկ (այն էլ՝ ինչպես այսօր պարզվում է՝ դիմախեղված) քաղաքականության աղախնի, կորցրին իրականության, գործընթացների նկատմամբ քննադատական-վերլուծական մոտեցման իրենց դերը և կանխատեսման ունակությունը, դրանով իսկ զգալի չափով դադարելով գիտություն լինելուց։

Մեզանում վարչահրամայական եղանակով պարտադրված, մտահորինովի բազմաթիվ ու բազմազան տեսությունների համաձայն մարդը, որպես սոցիալական սուբյեկտ, տարրալուծվեց տնտեսական հարաբերությունների մեջ։ Եվ, որպես դրա հետևանք, վերևարող և գրեթե միահեծան իշխող դարձավ մեծ չափում ունեցող զուտ տնտեսական (ավելի ճիշտ՝ տեխնիկատնտեսական, իսկ իրականում՝ տեխնոկրատական) մտածողությունը։ Տեխնոկրատական մտածելակերպի հաղթահարման ուղիով այսօր նորովի ենք մոտենում պետության ու հասարակության, մարդու և քաղաքական ինստիտուտների, ազգի, ազգայինի ու համամարդկայինի, անհատի և կոլեկտիվի հարաբերությունների, սեփականության ձևերի պրոբլեմին։ Մենք վերջապես հասկացանք, որ սոցիալ-քաղաքական ու տնտեսական երևույթները, չափազանց բարդ լի-

նելու պատճառով, անհնար է կառավարել որոշումների, հրաման-կարգադրությունների միջոցով և, որ դրանց կառավարումը մաթեմատիկական բանաձևերի չի ենթարկվում։ Տևականորեն շեշտադրելով միայն կոլեկտիվիզմը, հանուն ընդհանուր նպատակի անտեսելով և կոլեկտիվին ստորադասելով կոնկրետ անհատը, մեզանում գերիշխող էր այն կարծիքը, թե կոլեկտիվը միշտ արդարացի է, և անհատը պարտավոր է անվերապահ ենթարկվել նրան։

Ի դեպ գաղափարախոսության (նաև գիտության) որպես անմիջական օգտաբեր արտադրողական ուժի տեխնոկրատական ըմբռնման մեջ կորչում է գաղափարախոսության (հավասարապես նաև գիտության) իբրև հոգևոր կուլտուրայի ստորոգելիի նշանակությունը։ Դա նաև ստվերարկում է հումանիտար գիտությունները, որի անտեսումը մեր երկրում հասավ սպառնալի չափերի։ Աշխարհը վերափոխելու կոչված մեր մեծամիտ ու հավակնոտ տեսական դրույթները կաշկանդված լինելով հնացած դոգմաներով ու աշխարհընկալումներով և չհամապատասխանելով օրվա պահանջներին, բումերանգի պես սկսեցին հարվածել մեզ։ Բարձր նպատակին, մարդու բարեկեցությանը հասնելուն նպատակաուղղված գիտատեխնիկական առաջընթացն ու այլ միջոցները մեզանում ամբողջովին հետ մղեցին բուն նպատակը։ Մեզ համար մեծ աղետ դարձավ «էկոնոմիզմը», ժողովրդի կյանքի համակողմանի կատարելագործման խնդիրն արտադրության աճի խնդրով նենգափոխելը։ Տեխնոկրատական-պրագմատիստական մտածելակերպին յուրահատուկ է օրախնդիր նպատակների նկատմամբ ինստրումենտալ վերաբերմունքը։ Այս մտածելակերպից սերված գռեհիկ էկոնոմիզմի տեսության համաձայն արտադրության զարգացումը կարծես թե ինքնին ապահովում է սոցիալական առաջընթացը։ Մարդկային գործոնի բացառման պայմաններում տնտեսական գործունեությունը դիտվում է սոսկ որպես արտադրության տեխնիկատեխնոլոգիական, վարչակառավարչական զարգացում, ապրանքափոխանակության, բաշխման ու սպառման պայմանների ստեղծում։ Ի հետևանս դրա, մենք ստեղծեցինք գերազանցապես դեպի «արտադրություն հանուն արտադրության» կողմնորոշում ունեցող ինքնանպատակ և «ինքնակեր» էկոնոմիկա։

Տեխնոկրատական մտածելակերպի արմատները պետք է որոնել նորի ընկալումն արգելակող, ժամանակի պահանջներից հետ մնացած մեր աշխարհայացքային, փիլիսոփայական պատրաստականության մեջ։ Տեխնոկրատիզմի մեջ նշմարվում են բարոյականության վարչարյուրոկրատական խեղաթյուրման հետևանքները՝ բարոյականությունը սոցիալ-ուտիլիտարիզմի դիրքերից մեկնաբանելու, 1930—1940-ական թվականների էթիկական կուլտուրայից բխող՝ բարոյականությունը հոգևոր սպասարկման գործիք դիտելու, սրանից սերված՝ «նպատակն արդարացնում է միջոցը» ճիզվիտական կարգախոսի, կապիտալիզմի հանդեպ սոցիալիզմի «անվիճելի» առավելություններն ապացուցելու միսիոներական ջանադրության ռեցիդիվները։ Բարոյականության սոցիալ-ուտիլիտար, տեխնոկրատական կերպին բնորոշ են բարոյականության համակարգային էության ժխտումը, բարոյականությունը քաղաքականությանը հանգեցնելը, իր հերթին՝ քաղաքականությունը բարոյազերծ դիտելը, և՝ դասակարգայնությունը բարոյականության սպառիչ բնութագիր համարելը, անհատի շահերը կոլեկտիվի, հասարակության շահերին անվերապահ ենթարկելը, նյութական առաջադիմությանը բարոյական ու հոգևոր կորուստների գնով հասնելը և այլն։ Այդ հայացքների համաձայն, սոցիալիստական շինարարության «պաշտոնապես սանկցիավորված առօրյան» և ընդհանրապես այն, ինչ օգտակար էր համարվում խորհրդային պետությանը, նույնացվում էր գործողությունների բարոյապես արժանի կերպի հետ։ Իր հերթին՝ վերևից իջեցված յուրաքանչյուր ակցիա, պետական-պրակտիկ ամեն մի կարիք, բարձրացվում էր էթիկական առաքինության աստիճանի։

Արդյո՞ք տեխնոկրատական, պրագմատիստական մտածելակերպի հետևանք չէ՞ այն իրողությունը, որ մեր ապաշնորհ ղեկավարները հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների իմացությունը նենդափոխեցին եր-

կիրը երջանիկ դարձնելու իրենց սուբյեկտիվ և անգրագետ պատկերացումներով, միջին կենդանի ոգին հանված-ամլացված «մարքսիզմով», որը վերածել էինք «միակ ճշմարիտ գիտության», դոգմաներից արված քաղվածքների ժողոմածուի։ Կամ էլ՝ ստալինականությամբ խեղանդամված սոցիալիզմը, որը նոր հասարակություն կառուցելու նպատակադրությամբ երկիրը մտցրեց պլանային-զորանոցային կիսաֆեոդալական գոյության փակուղի, երբ միասնության և կարգապահության դրոշի տակ մարդկանց համառորեն ստիպում էին ենթարկվել վարչաշինովնիկական ապարատին, անվերապահորեն կատարել նրա հաճախ տհաս ու քմահաճ ցանկությունները։ Անհատի պաշտամունքի և լճացման տարիներին մեր հասարակության տեխնոկրատական ապահումանիզացումն իր բարոյական հետքը թողեց բուհի, դպրոցի, կրթության ամբողջ համակարգի վրա։ Մենք դարձանք մեր ամբողջական գործունեության հետևանքներին անտեղյակ նեղ մասնագետներ, «մասնակի մարդիկ»։ Կրթության և դաստիարակության մեր համակարգն էլ ստեղծված է «մասնակի մարդկանց» միջոցով, առայժմ միայն այդ կարգի մարդիկ ձևավորելու համար։ Դրա գլխավոր արատը մեկուսացումն է համամարդկային հոգևոր-բարոյական արժեքներից։

Նախախորհրդային կրթական համակարգի գլխավոր արժեքներից մեկը նրա շեշտված հումանիտար ուղղվածությունն էր. ցանկացած խավի, այդ թվում՝ տեխնիկական մտավորականության համար առանձնապես անհրաժեշտ էր լեզվի, գրականության լավ իմացությունը, գեղանկարչության, ընդհանուր և սոցիալական հոգեբանության, արվեստի մեջ կողմնորոշվելը։ Այս կարգի կրթությունն ու դաստիարակությունն օգնում էին զուտ մարդկային հատկանիշների՝ հայրենասիրության, օրինավորության, անկաշառության, անանձնականության, չարն ու բարին իրարից ջոկելու և այլ ունակությունների ու բարձրաբարո հատկանիշների դաստիարակությանը։ Համամարդկային արժեքներին հաղորդակցվելը «նեղ» մասնագետին հնարավորություն էր տալիս ավելի լայնորեն ու խոր ընկալել շրջակա աշխարհը։ Ահա հումանիստական այս հիմքից էլ աճում էին նեղ ուղղությունների մասնագետները՝ գիտնականներ, ինժեներներ, գործարար մարդիկ։ Նախ՝ քաղաքացի-հայրենասեր, հետո նոր մասնագետ. հիշենք բարեգործ հարուստ-հովանավորներին, զեմստվոյական բժիշկ նվիրյալներին, նաև՝ հայկական խուլ գյուղի 5—10 երեխաներից կազմված դպրոցում մանուկներին հայերեն կրթություն տվող եվրոպական համալսարանի շրջանավարտներին և այլն։

Հասարակության նորացմանը զուգընթաց պետք է նորացվի նաև մեր բարձրագույն դպրոցը։ Սակայն դեռևս հայտնի չէ, թե այն որքանով է հումանիզացվելու։ Ավելին, մեր տեխնիկական բուհերում սոցիալ-քաղաքական և կուլտուր-փիլիսոփայական առարկաներին հատկացվող ժամաքանակը աղետալիորեն կրճատվում է։ Ուսումնական առարկաների կառուցվածքն ու ծավալը որոշելու գործում բուհերի ղեկավարներին տրված իրավունքներն այժմ գործում են ի վնաս հասարակագիտական առարկաների։ Հախուռն կերպով ամեն ինչ մերժող ու թերագնահատող ամբոխային մեր դեմոկրատիայի պայմաններում հիմա էլ այլ երանգներով հնչող ավանդական նիհիլիզմի դիրքերից հասարակագիտական առարկաներն ուսումնական ծրագրերից բացառելու կոչեր են հնչում։ Կան նաև դրանք գործնականի վերածելու տխուր փաստեր ևս։ Ամերիկյան, ճապոնական և գերմանական բարձրագույն դպրոցները տեխնիկական մասնագետների պատրաստման ընթացքում (ուսանողների նեղ մասնագիտացման բացասական հետևանքները չեզոքացնելու համար) հաճախ հումանիտար առարկաներին 2—4 անգամ ավելի շատ ուսումնական ժամանակ են հատկացնում, քան մենք։ Ուսանողների հումանիտար պատրաստականության նկատմամբ լայն տարածում գտած անտարբերությունը հետևանք է ոչ միայն հասարակության մեջ հումանիտար մտածողության ընդհանուր թերագնահատման, այլև բուհերում հասարակական-

քաղաքական առարկաների կոնկրետ դասավանդման անբավարար դրվածքի։ Տեխնոկրատական մտածելակերպը, մարդու նկատմամբ «հաշվապահական» մոտեցումը, որը թելադրված էր գիտատեխնիկական առաջադիմությունը մարդուն ծառայեցնելու առաջին պահ բարի մղումով, խեղաթյուրվեց՝ վերածելով արտադրության պաշտամունքի։ Պատմության մարքսյան մատերիալիստական ըմբռնումը հանգեցրեց մեկ բանի՝ ամեն ինչ կախված է բազիսից. արտադրության զարգացումից, ավելի առօրեական՝ «համախառնից», արտադրանքի ծավալից։ Գիտատեխնիկական հեղափոխությունն ընկալվեց պարզունակացված և գռեհիկ կերպով՝ սոսկ արտադրանքի հիմնական տեսակների ծավալների մեծացման իմաստով։ Հենց դրան էլ հանգեցվեց «կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը», որն արտահայտվեց պողպատի, ցեմենտի, չուգունի, նավթի, գազի և այլնի արտադրության ծավալների որոշման գործում։ Այս դեպքում տեխնոկրատական ուտոպիզմը գործառում էր իր պարզությամբ և մատչելիությամբ, առանց մեծ թափավազքի, գրոհի և սրընթաց հարձակման եղանակով դեպի կոմունիզմ հրապուրիչ թռիչքի գրավիչ հեռանկարով։ Իրականում, այս ամենի հետևանքով էկոնոմիկան ավելի շատ սկսեց խեղդվել «համախառնից», որի մի շարք ցուցանիշներով երկիրն արդեն 1970-ական թվականների սահմանագծում դուրս եկավ աշխարհում առաջին տեղը։ Սակայն պարզվեց, որ որակական ցուցանիշներով մենք ոչ մի քննություն չենք բռնում։

Տեխնոկրատական մոտեցման հետևանքով արդյունաբերության, գործարան-գիգանտների մենաշնորհը, արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների գների չպատճառաբանված, քմահաճ բարձրացումը, հողի սեփականության պետական մենաշնորհը, դրա իսկական տիրոջ բացակայությունը դարձան մեր գյուղատնտեսության քայքայման հիմնական պատճառներից մեկը։ Արտաքին տնտեսական բարեկեցության տակ քողարկվեցին զարգացման համաշխարհային մակարդակից աղետալիորեն հետ մնալու խորքային պատճառները։ Ագրեսիվ էկոնոմիկայի ցուցանիշների, թվերի, արտադրական պլանների, պարտավորությունների, նախաձեռնությունների և բառային ֆետիշիզմի տեխնոկրատական մթնոլորտը մարդու մեջ ծնում էր անձնականի, անհատականի մարում, դրա կարևորության արհամարհում-անտեսում։ Էկոնոմիկայի և քաղաքականության բարդ պրոբլեմներն իրապես լուծելու փոխարեն գաղափարախոսությունն ու պրոպագանդը իրենց ջանքերը կենտրոնացրել էին «զարգացած սոցիալիզմի» մեռելածին և սխոլաստիկ հիմնադրույթի վրա, որի ստեղծողներն ու քարոզողները ելնում էին առանց հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի, առաջին հերթին տնտեսական իռացիոնալ մեխանիզմի արագացված զարգացման հնարավորությունից։ Գաղափարախոսական այս հարայհրոցի մեջ մոռացվեց մարդը։

Նմանօրինակ տրամաբանության մնացուկներն ավելի կենսունակ գտնվեցին, քան կարծում էինք։ Ժամանակը դրանք տրանսֆորմացրեց, սակայն տեխնոկրատիզմի գերիշխող ազդեցությունը աստիճանաբար հանգեցրեց այն բանին, որ տնտեսական և սոցիալական նպատակներին հասնելու միջոցների հարցում ավելի հաճախ շրջանցվեց բուն մարդը, որն իր հերթին է՛լ ավելի նկատելիորեն սկսեց հանդես գալ որպես միջոց, չնայած, որ խոսքով մնում էր նպատակ։ Եվ բարոյական արգելակներից զուրկ պրոֆեսիոնալ նկրտումներով էլ հենց հանուն «ժողովրդի բարեկեցության» կարգախոսով կատարվեցին տնտեսական, տեխնոլոգիական, էկոլոգիական հսկայական վնասարարություններ։

Տեխնոկրատական մտածելակերպից սերված ծախսային մեխանիզմը դարձավ հավելագրումների, աշքակապություն, ցուցամոլություն, կաշառակերություն ծնողը, քանի որ ոչ միայն խանգարում էր մարդու, կոլեկտիվի, հասարակության խորքային հնարավորությունների բացահայտմանը, այլ ստեղծում էր հակահիրավական, հակաբարոյական գործողություններ։ Այդ ամենը մենք տեսել ենք իրական կյանքում։ Մա-

սամբ նաև այս մտածելակերպի հետևանք էր, երբ որպես ստվերային էկոնոմիկա տանող միջանկյալ մի վիճակ մեզանում գոյավորվեց ձևական էկոնոմիկան։ Դրան էլ բնորոշ է կողմնորոշումը ոչ թե դեպի արդյունքը, այլ՝ ցուցանիշը. «պլան՝ ինչ գնով էլ լինի» կարգախոսն անկման սկիզբն էր։ Դրա հետևանքով մեր ամբողջ հասարակական արդյունքի զգալի մասը ոչ թե ապրանք էր, այլ արդեն թողարկվածի և համրածի կրկնահաշիվ։ Դեռ վերջերս լավագույններից լավագույնը համարվող, մրցանակներով, դրոշներով ու այլ պարգևներով գնահատված արտադրական ձեռնարկությունն այսօր կարող է համարվել տնտեսական կեղծարարության և գործերի ու հաշվետվությունների անհամապատասխանության օրինակ։

Տեխնոկրատական մտածելակերպով էր թելադրված տեխնիկական, շինարարական ձեռնարկումների ժամանակ սոցիալական, ժողովրդագրական, էկոլոգիական, երկրաբանական, նաև՝ քաղաքական և այլ ասպեկտների հաճախ հանդիպող անտեսումը։ Տեխնոկրատներին պետք է եղել բնակելի շենք, թաղամաս, գործարան, քաղաք կառուցել, անշուշտ, վերոհիշյալ պարտադիր գործոնների հետ հաշվի նստելու գլխացավանքից իրենց ազատելով։ Բացի այդ, տեխնոկրատները ծախսերը կրճատելու կեղծ պատճառաբանությամբ ընդունված ստանդարտներն ու նորմատիվները քմահաճորեն պարզեցրել ու էժանացրել են, մարդկանց առողջության ու անվտանգության հաշվին խնայելու բարբարոսական ձեռնարկումներ իրականացրել, ժողովրդին «ներ» թողնելով շինարարական «կիսաֆաբրիկատ»։ Վկա՝ երկրաշարժի հետևանքը։ Ավելին, և երբ ծառացավ երկրաշարժից տուժած գոտու վերականգնման հարցը, ամեն մի շինարարության վերաբերյալ պարտադիր գործոնների կոմպլեքսային գործադրման անկարողությունն էլ հենց դարձավ աշխատանքների անարդյունավետության հիմնական պատճառներից մեկը։ Տեխնոկրատին դժվար է հավատալը, որ երբեմն կյանքը կարող է ընթանալ «ինքնին», ըստ իր բնական օրենքների, որ նրա վրա կարող են ներազդել նախօրոք ճանաչման և պլանավորման ոչ ենթակա պատահական ուժեր։ «Տարերայնություն» բառը նրա մեջ անպայման սանձելու, պլանային հունի մեջ գնելու զուգորդություն է առաջացնում։ Մի տեսակ պաշտամունքի վերածելով էկոնոմիկան, ի վերջո չունեցանք ո՛չ կրոն ավանդական իմաստով, և ոչ էլ՝ էկոնոմիկա, այդ բառի իսկական իմաստով։ Եվ շնորհիվ մարքսիզմի յուրօրինակ մեկնաբանության, ստացանք «դիալեկտիկական միստիկա»՝ արտադրության տեխնոկրատական պաշտամունք։

Բյուրոկրատական-կենտրոնացված համակարգին բնորոշ՝ ամեն ինչ ունիֆիկացնելու տեխնոկրատական մտածելակերպը մեծ վնաս հասցրեց նաև ազգամիջյան հարաբերություններին։ Ստալինյան վոլյունտարիստական ազգային քաղաքականության պայմաններում, երբ առավելագույն նրբանկատություն պահանջող այդ հարցը լուծվում էր «վերևից»՝ կենտրոնից կոպիտ վարչարարության, հրամանի միջոցով, ոտնահարելով շատ ժողովուրդների ազգային արժանապատվությունը, սուբյեկտիվիստական դիրքերից խեղաթյուրելով նրանց պատմությունը, ազգային զարգացման հիմնահարցերը հանգեցվում էին սոսկ սոցիալ-տնտեսական աճի։

Տեխնոկրատական մտածելակերպի «կանոններով» անտեսվում էր այն ակնհայտ հանգամանքը, որ հասարակական կյանքի ազգային ձևերը գործառվում են իրենց սեփական օրենքներով և պետք է յուրովի տրանսֆորմացնեն էկոնոմիկայի, սոցիալ-կուլտուրական զարգացման, ազգային-պետական շինարարության ոլորտում ընդհանուր-միութենական քաղաքականությունը։ Տեխնոկրատական մտածելակերպի տասնամյակների շերտանստվածքն էլ հենց դարձավ ազգային պրոբլեմների ներկա սրման, ազգային անհանդուրժողականության, կենցաղային ազգայնականության պատճառներից մեկը։ Այսօրվա շատ սուր խնդիրներ հետևանք են ինդուստրիալ-տնտեսական զարգացման հակասությունների, հատկապես նրա սոցիալական ու էկոլոգիական, ժողովրդագրական, ուրբանիստական գործոնների անտեսման։ Կառավար-

ման վերից-վար պլանավորման, ճյուղային սկզբունքի արմատացած գերակայելիությունը, ազգային պայմաններն ու ավանդույթները, էկոլոգիական պահանջները և տարածքային համալիր զարգացման շահերը հաճախ անտեսող դերատեսչականությունը մեծապես վնասեցին ազգային ինքնագիտակցությանը։ Այդ հարցում փոխ «սև գործը» կատարեց նաև կենտրոնական գերատեսչությունների կողմից արտադրության տեխնոկրատական անխելամիտ տեղաբաշխումը, որն էկոլոգիական բնույթի վնասներից բացի հանգեցրեց բնակչության միգրացիայի, առանձին վայրերում արմատական բնակչության մեջ հարուցելով իր հողի վրա տեր լինելու իրավունքի կորստյան վտանգ։

Սխալ է ասել, թե դա լճացման տարիների երևույթ է։ Այդ տարիներին այն ծաղկեց։ Դրա գոյավորումն ավելի շուտ պետք է կապել Ռուսաստանում գիտատեխնիկական դարաշրջանի սկզբնավորման, գիտատեխնիկական հեղաշրջման տարփողման, տեխնիկայի զարգացմամբ մարդկության հոգսերը դարմանելու վերագրումներին։ Դրա արմատները պետք է որոնել 1920—1930-ական թվականների իրողության մեջ։ Շեշտադրումը դեպի լայնամասշտաբ ինդուստրացումը, միասնական սոցիալիստական արտադրության պրոցեսում ազգային նախկին ծայրամասերի տնտեսական կտրուկ վերելքը մի կողմ մղեցին գլխավոր շարժիչ ուժը՝ մարդկանց միջև եղած միջանձնային և ազգամիջյան հարաբերությունները։ Հասարակությունը սկսեց դիտվել սոսկ որպես ատոմնանալիզների միջոցով ղեկավար կամքն ըստ ատյանների ճշգրիտ փոխանցման համար ստեղծված մեխանիզմ։ Այդ իսկ պատճառով նյութական բարիքների համատեղ արտադրության ընթացքում տարբեր հանրապետությունների աշխատավորական զանգվածների՝ իրականում մակերեսային բնույթի հարաբերությունները միամտորեն մատուցվեցին որպես ազգամիջյան հարաբերություններ։

Տեխնոկրատական մտածելակերպից է սերված տեխնիկական թվացյալ շահերից բխող կառավարման կենտրոնացումը։ Ձևախեղված կենտրոնացմամբ տնտեսական մեր քաղաքականությունն այն ուժը դարձավ, որը հակասության մեջ մտավ հանրապետությունների ազգային շահերի հետ, դրանով իսկ ազգերին մերձեցնելու փոխարեն իրականում հեռացրեց նրանց, նպաստելով ազգայնական տրամադրությունների և կենտրոնախույս ուժերի գոյավորմանը։ Նաև տեխնոկրատական մտածելակերպով էր պայմանավորված «արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման» քաղաքականությունը, որի հետևանքով հսկայական շրջաններ դարձան յուրատեսակ արտադրամասեր, որոնք այսօր այլևս չեն կարող գոյություն ունենալ իրարից անկախ։ Երկրում էկոնոմիկայի, ֆինանսների ու կառավարման այնպիսի կառուցվածք ստեղծվեց, որը հանրապետություններին հնարավորություն չի ընձեռում խոսել տնտեսական և տեխնոլոգիական տարբեր լեզվով, ավելին՝ ինչպես ամբողջ երկրին, այնպես էլ հանրապետություններին ներգծվել ժամանակակից աշխարհի մեջ։ Էկոնոմիկայի կառուցվածքի, զարգացման ու կառավարման տերունական ըմբռնումն այսօր էլ տպառնում է գոյատևել։

Կենտրոնից, առանց իշխանության տեղական մարմինների գիտության, հաճախ նրանց կամքին հակառակ, արտադրական ուժերի կամային տեղաբաշխումը, դրանց զարգացման հարցերում դրսևորվող տեխնոկրատական հաշվեխախներն ինչ-որ տեղ դիտվում-գնահատվում էին որպես հանրապետությունների, ազգային-վարչական այլ միավորումների ինքնուրույնության ոտնահարում, կամ էլ ռուսականացման դիտավորություն՝ տեղերում հարուցելով դժգոհություններ։ Ժամանակին ժողտնտխորհներից անցանք ժողովրդական տնտեսության կառավարման ղեկավարման ուղղահայաց համակարգի։ Գիտատեխնիկական առաջընթացի գործում շահեցինք թե չէ՝ դժվար է ասել, սակայն, որ ազգային հարաբերություններում վնասվեցինք՝ փաստ է։ Դա պարզ հոգեբանական գործողություն էր՝ շահերը, պահանջմունքը գոյավորվում էին ներքևում՝ Հայաստանում, Վրաստանում, Էստոնիայում և այլն,

սակայն դրանք պետք է բավարարվեին Մոսկվայում։ Մոսկվան զուգորդվում էր Ռուսաստանի հետ։

Նաև տեխնոկրատական երանգներ ունեցող արատավոր մտածելակերպի մեկնակետից էլ հենց սխալ գնահատվեցին վերջին երեք տարում մեր հանրապետությունում ընթացող հասարակական-քաղաքական պրոցեսները։ Ժողովրդական լայն զանգվածների՝ վերակառուցմամբ խրախուսված և Արցախով հարուցված ակտիվացումն անհեթեթորեն գնահատվեց որպես ծայրահեղաբար տրամադրված խմբերի կողմից ընդհանուր իրադրությունն ապակայունացնելու, քաղաքական իշխանությունը գրավելու փորձ, անջատողականություն։ Այսպես մտածողներն էին, որ ապագաղութացման շեշտադրում ունեցող արցախյան շարժման ընթացքում փորձում էին ժողովրդական լայն զանգվածներին տիրապետած ազգային գաղափարը համակշռել հույժ կասկածելի տնտեսական արտոնություններով ու առավելություններով։

Տեխնոկրատիզմն աչքի է ընկնում էկոլոգիական անգրագիտությամբ, բնության հանդեպ կիրառվող գերատեսչական զավթողամոլությամբ։

«Ինդուստրիալ եսամոլության», գերատեսչականության, զարգացման տեխնոկրատական միտումների դեմ, հանուն բնության պահպանման մղվող պայքարը ներգծվում է արդի հասարակության նորացման հեռանկարների հետ։ Ոչ միայն նոր, այլև փիլիսոփայական մտածելակերպ են պահանջում հողերի յուրացումը, նոր բնակզանգվածների կառուցումը, բնության հետ ամենօրյա առնչությունները։ Մարդկության ողբերգական վախճանի հեռանկարը հարկադրում է մարդկանց գիտակցությունից դուրս մղել մինչև այժմ գերիշխող՝ անտարբերությունը և մարդկանց կործանող լավատեսական-տեխնոկրատական մտածելակերպը։ Գաղտնիք չէ, որ փներցիայի ուժով մարդկանց գիտակցության մեջ շարունակում է գերիշխել բնության նկատմամբ պարզունակ-լավատեսական, տեխնոկրատական աշխարհայացքը, որը գործելակերպ դառնալով շարունակում է աղետալիորեն աղտոտել կենսոլորտը, թունավորել մարդկանց։ Սակայն գնալով ավելի ենք գիտակցում, որ տեխնոլոգիական, ավելի ճիշտ տեխնոկրատական տեռորի հիմնական զոհը մենք ինքներս ենք։ Արդեն հնգամյակների, ինդուստրացման առաջին տարիներին գոյավորված տեխնոկրատական այսօրինակ գաղափարախոսությունն առաջադիմությունն առաջին հերթին կապում էր տեխնիկայի տիրապետող դառնալու, բնության վրա «հերոսական» հարձակման հետ։ Լայն տարածված այն կարգախոսը, որ «սոցիալիզմին բնութագրական է առավել կատարյալ բնօգտագործումը», բթացրեց մեր զգոնությունը։ Ավելին, ինչ-որ տեղ մեր պլանային էկոնոմիկան դարձավ բնությունը պլանային կերպով ավերելու ստրատեգիա։ Որպես տեխնոկրատական մտածելակերպի անմիջական հետևանք ստեղծվում էին առասպելներ, որոնց հիմնական նպատակը հասարակական կարծիքը մոլորեցնելն էր։ Այս շարքին է պատկանում անթափոն տեխնոլոգիայի գրավիչ կոնցեպցիան, որը, թերևս այսօր էլ մատուցվում է իբրև արդյունաբերական էկոլոգիայի ցանկացած պրոբլեմի լուծման համադարման։ Իրականում, ըստ իս, մենք գործ ունենք մի տարածված երևույթի հետ, երբ ռեսուրսախնայողության, արտանետումները կանխելու միջոցների կիրառման հունով ընթացող լուրջ աշխատանքը (որի բաղադրիչներից է նաև նույն ինքը՝ անթափոն տեխնոլոգիան), նենգափոխվում է հրաշք-տեխնոլոգիայի հանդեպ առասպելական հավատով ու ծնրադրությամբ, իսկ ստացված մասնակի արդյունքը քիչ է մնում բարձրացվի բնության նոր օրենքի կարգավիճակի։ Ոչ վաղ անցյալում, հատկապես բնապահպանական գործում, խիստ բացասական դեր խաղացին «ատոմային առասպելները», որոնք ստեղծեցին էկոլոգիական, էլեկտրաէներգիայի արտադրության, մետալուրգիայի, ջերմամատակարարման համակարգի, տրանսպորտի առանձին տեսակների և մի շարք այլ բնագավառներում ատոմը լայնորեն ներդնելու ուղիով խնդիրներն արագ լուծելու պատրանք։ Ըստ որում, «ատոմամետների» սիրած հնարն էր՝ նվազեցված թվի վրա հիմնված հաշվարկներով, վառելիքի պաշարները մոտ

ապագայում սպառվելով մարդկությանն ահաբեկելը և այս կիսաճշմարտությամբ լծենց գործն առաջ տանելը։

Տեխնիկային հրաշագործ գերունակություն վերագրողներին Ջեռնոբիլը և նույնատիպ աղետները պետք է որ գաս լինեն. երևույթների ու մեխանիզմների գործառնության, հավանականության հաշվարկման մաթեմատիկական եղանակները, առանց մարդկային գործոնի թերի են ու սխալ։ Տեխնոկրատիզմից սերված այս մտածելակերպով են խրախուսված գիտության էթիկական չափումներն անտեսող, ժողովրդի վրա միլիարդներ նստող ձախավեր փորձարարությունը, ժողովրդի գլխին վարչահրամայական եղանակներով պարտադրված փորձանք դարձած գիտափորձերը։ Հիշենք «դարի նախագծերը»՝ ԲԱՄ-ը, հյուսիսի գետերը վար շրջելու, Արալը չորացնելու, Սևանից «շուրջ քամելու», ավելացնենք նաև՝ Եղվարդի ամբարտակը կառուցելու նախագծերը։ Համաժողովրդական քննարկում պահանջող և հավաքական ինտելեկտի «փորձաքննությունից» հետո միայն որոշում կայացնելու ենթակա հարցերը դնելով գերատեսչական գրաքննության տակ, «նեղ մասնագետները» հանգիստ խղճով հանուն գազի մեռցնում են տունդրան, հանուն հանքային պարարտանյութերի պլանի կատարման և արտադրության ծավալներով աշխարհը զարմացնելու նպատակով թունավորում են գետերը, աղբյուրները, հողը և այլն։

Արդյո՞ք մեր հանրապետությանը քիչ վնաս հասցրին սեփական նացիոնալ-տեխնոկրատները. քիչ է մնացել, որ Հայաստանի բնակչությունը գրանցվի կարմիր գրքում։ Բացահայտ տեխնոկրատական քյալլագյոզության, էկոլոգիական անգրագիտության, մասնագիտական անձեռնհասության արդյունք էր փոքր տարածք, գերխիտ բնակչություն ունեցող մեր հանրապետությունում, ուր բացակայում են վառելիքահանքային ռեսուրսները, քիմիական էներգատար հզոր գործարանների ստեղծումը։ Տեխնոկրատական մտածողության ստերեոտիպերով դաստիարակված, մասնագիտական մոլեռանդությունից զգոնությունը կորցրած «բնությունը նվաճողների» սերնդի թեթև ձեռքով Սևանը կործանման եզրին հասցվեց, Հայաստանը աղետաբեր «մեծ քիմիայի» հանրապետություն դարձավ, «պայմաններ» ստեղծվեցին, որ նույնիսկ Արարատյան գաշտը մի 30—40 տարի հետո դառնա բնակելի մի զանգված։ Տեխնոկրատական անբարոյականությունից հայկական ատոմակայանը ծնվեց։ Անցած դարը ժամանակներում խոսք անգամ լինել չէր կարող ժողովրդի համար ճակատագրական նախագծեր իրագործելիս հասարակական կարծիքը, մեր երկրի, առավել ևս՝ արտասահմանի փորձը հաշվի առնելու մասին։

Մարդկանց ճակատագրի, նրանց բուն գոյության հետ կապված հարցերը հարկավոր է կանոնավորել օրենքներով։ Ի դեպ, չգիտես ինչու, որտեղ կանոն, տեխնոկրատներին է հանձնարարվում նրանց իսկ կողմից վնասված կենսոլորտի վերականգնումն ու վերահսկումը։

Մենք պետք է զգուշանանք տեխնոկրատիզմի նոր վտանգից։ Բանն այն է, որ այսօր ականատեսն ենք մի նոր երևույթի. պետական սոցիալիզմի մեր երկրում կառավարող նոմենկլատուրան, համակարգի հիմքը կազմող քաղաքական բյուրոկրատիան տասնամյակների մենաշնորհ ավտոկրատական կառավարումից հետո ստիպված է կառավարման բռնակի մոտ թողնելու հիմնականում տեխնիկական մտավորականության լայն խավերի։

Հարցն ունի երկու եզր. առաջին պահին թվում է, որ կառավարման տեխնոկրատական նոր շրջափուլ է սկսվում։ Ավելին, ֆիզիկամաթեմատիկական ռիտելիքները երբեք չեն փոխարինի կառավարման արվեստին, քաղաքական և ընդհանուր կուլտուրային։ Ավելին, այս գիտությունների տվյալներով դեռևս ոչ ոքի չի հաջողվել հասարակության մեջ օրինական վարքի կանոններ հաստատել, կյանքի իմաստի իմացություն ձեռք բերել։

Կանխատեսենք այլ իրավիճակ։ Տնտեսական մեխանիզմի կատարելագործման, սեփականության նկատմամբ նոր հայացքի ու դրա թույլատրելի ձևերի բազմազանության, ազատ շուկայական էկոնոմիկայի զարգացման և

շուկայական հարաբերությունների արմատավորման պայմաններում սոցիալական այս խմբի (տեխնոկրատներ) նկատմամբ կուժեղանա հետաքրքրությունը, է՛լ ավելի կամրապնդվի նրա դիրքերը։ Նոր պայմանների ընձեռած հնարավորությունները նրանց համար կայուն գերիշխող դիրքեր կստեղծեն, նրանք կսկսեն «ներքևից» ամբողջ էկոնոմիկային իրենց պայմանները թելադրել արտադրության վարման, արտադրանքի որակի, դրա գնի և այլ հարցերում։ Կառավարման ոչ քիչ փորձ, խոշոր տնտեսական ռեսուրսները վերահսկելու հնարավորություն ունեցող այս նեոտեխնոկրատները կարող են դառնալ զգալի հասարակական ուժ։ Մանավանդ, եթե նրանց թվին ավելացնենք տեխնոկրատների տնտեսական ծրագիրը պաշտպանելու պատրաստ սոցիալական մի զգալի շերտ կազմող այն մարդկանց, որոնց կենսադիրքը մարմնավորվում է զուտ գործարար հաջողություններով, ովքեր հենվելով իրենց որակավորվածության, ճարպկության, եռանդի վրա, ցանկանում են լեգալ կերպով մեծ գումար աշխատել, դա անկեղծորեն համարելով տնտեսական և, նույնիսկ՝ սոցիալական ակտիվության դրսևորում։

Հասարակական վերակառուցումը ենթադրում է մարդկային գործոնի կարևորում, անցում աշխատողից դեպի մարդը։ Հետևաբար, մեզ առաջին հերթին հարկավոր են համանշանակ իդեալներ ու արժեքներ, որոնք կարելի է հակադրել տեխնոկրատական գաղափարախոսությանը, տեխնիկայի «եսակենտրոն» ինքնահաստատման ագրեսիվ ձգտումներին։

Արժանին հատուցելով գիտության և տեխնիկայի մեծ նվաճումներին, միաժամանակ, զերծ մնալով դրանք ինքնաբավ ֆենոմեն և սոցիալական պրոբլեմների լուծման համադարման համարելուց, մարդկային սթափ բանականությունը զգուշացնում է տեխնոկրատիզմի, նեղդործնականության, երևույթների նկատմամբ մետաֆիզիկական մոտեցման վտանգից։ Տեխնիզացված աշխարհով ապրող, տեխնիկայի դերը գերագնահատող, «պրակտիցիստական ռացիոնալիզմով» տառապող մարդկանց ուշադրությունը մշտապես պետք է հրավիրել գիտատեխնիկական հեղափոխության աշխարհայացքային կողմի, նրա սոցիալ-քաղաքական հետևանքների վրա։

ТЕХНОКРАТИЗМ: ИЗДЕРЖКИ МЫШЛЕНИЯ И ПОЛИТИКИ

А. А. ОВСЕПЯН

Резюме

Начавшиеся в нашей стране перестроечные процессы, в частности, процесс гуманизации общества и совершенствования общественных отношений, упираются также в один из факторов, приведших общество к деформации,—в стерсотипы технократического мышления, технократического видения освоения действительности. Под воздействием технократизма, которому свойственно социально-утилитарное понимание гуманизма и морали, в течение десятилетий в обществе складывалось негативное отношение к гуманитарным наукам. Это опасное явление, ибо технократическое мировосприятие основывается на примате средства над целью, частной цели над общечеловеческими интересами, техники над человеком и гуманистическими ценностями.